Համաժողովի նշումներ

Օդապարուկները և ուխտերը

Նախագահ Օուքսը խոսեց մի տղայի մասին, որն իր հայրիկի հետ օդապարուկ էր թռցնում: Տղան առաջարկեց կտրել թելը, որպեսզի օդապարուկը կարողանար ավելի վեր բարձրանալ: Հայրը բացատրեց, որ եթե թելը կտրվի, օդապարուկը ցած կընկնի: Թելը ներկայացնում է այն ուխտերը, որոնք մեզ կապում են Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի հետ: Մեր ուխտերը պահելով ավելի ենք մոտենում Նրանց:

Սա սովորեցնում է ինձ.

Ապակենկարով պատուհանը

Երեց Ուխդորֆը մկրտվել է 75 տարի առաջ: Նրա վկայությունը սկսվում է Գերմանիայում՝ դեռևս մանուկ հասակում: Նա մինչ այժմ հիշում է այն սրբազան զգացողությունները, որ ունեցել էր՝ իրենց հավաքատանը Հիսուս Քրիստոսի ապակենկարով պատուհանին նայելիս: Հոգին վկայեց նրա մտքին և սրտին, որ Հիսուս Քրիստոսն աշխարհի Փրկիչն է:



Սա սովորեցնում է ինձ.

Կենտրոնանալ Հիսուսի վրա

Երեց Էգբոն պատմեց 1996 թվականի օլիմպիական խաղերի Նիգերիայի տղամարդկանց ֆուտբոլի հավաքականի մասին: Նրանք չունեին շատ գումար, ոչ էլ լավագույն մարզավիճակում էին: Բայց նրանք կենտրոնացան իրենց նպատակի վրա, արհամարհեցին բոլոր շեղումները և դարձան ոսկե մեդալակիր: Երբ մենք անտեսում ենք աշխարհիկ շեղումները և կենտրոնանում Հիսուս Քրիստոս վրա, մենք նույնպես կհաջողենք:

Սա սովորեցնում է ինձ.

Տալ հարցեր

Քույր Բրաունինգն ասաց, որ մինչև 1992 թվականը գիտնականները կարծում էին, որ Պլուտոնը գտնվում է մեր արեգակնային համակարգի եզրին: Բայց գիտնականները շարունակում էին սովորել և տալ հարցեր: Այժմ մենք գիտենք, որ Պլուտոնից այն կողմ դեռ շատ բաներ կարող ենք բացահայտել: Երբ հարցեր ունենք, կարող ենք դիմել Երկնային Հորը: Ավետարանի անկեղծ հարցերը կօգնեն, որ մենք շարունակենք սովորել և աճել:

Սա սովորեցնում է ինձ.

ՆԿԱՐՆԵՐԸ՝ ՋՈԸ ՖԱԼՔՆԵՐ